

17263

Quaugh - Supply

891.99
U-41

P - 1913

ՈՐՆԵՐԻ ՍՆԻՆՑՅԻ ՆԱՆ

ԳԱՆԳԻ-ԾԱՂԻԿ

Երանի քեզ անյայտ դու գանգ,
Որ ծաղիկ է քեզ սիրում
Եւ ոչ թէ ես կամ այլ մի մարդ,
Որ քեզ մօտ կնք կանդ առնում...

№ 20 03

891.99

Ս-41

Թիֆլիս—1913
Տպ. էսպերանտո

ԲՈՐԵՆԻ ՍԵՐԱՅՖ ԵՐԱՆ

891.99

Ս-41

Աս

ԳԱՆԳԻ-ԾԱՂԻԿ

1001
3690

Երանի քեզ անյայտ դու գանգ,
Որ ծաղիկ է քեզ սիրում
Եւ ոչ թէ ես կամ այլ մի մարդ,
Որ քեզ մօտ ենք կանգ առնում...



ԹԻՖԼԻՍ—1913
Տպ. է ս պ ե ր ա ն տ օ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄՔ

Սիրելի ընթերցողներ! Ես կամենում եմ իմ կտոր-կտոր երգերիս մտքերի բովանդակութիւնը մի քանի խօսքով ձեզ բացատրել, ի նկատի առնելով որ դուք—կրմբունէք և առայժմ կրբաւականաք այս տողերով...

Մեծ յոյս եմ տանում որ իմ այս առաջին համարձակութեան փորձը ձեզ վրայ չարութիւն և անբարոյութիւն չի թողնիլ...

— Երգը—հոգս է... Երգը—մարդու սիրան է... Սիրտը—լարին է տրորում, լարը—լեզուին է թելադրում, լեզուն—մարդկանց է քարոզում... և այնուհետև միայն մարդիկ իրար լաւ են հասկանում... որ հա, նա մի երգ է, որը բղիւում է սրտի խորքից... եփուած արիւնից...

Եւ այսպէս երգը—գարդոտ սրտի, ուրախ հոգւոյ հոգսն է քաշում, խաշած թոքերին ջուր է ածում, գազանի դիմաց պարզ է խօսում... որովհետև նա սրտի խորքից պարզ ու ազատ է ծնուած...

Ուրախ թէ տխուր մարդիկ իրանց սրտի լարերը տրորելով, զանազան երգեր ու ձայներ են յօրհնում... և երգիչն էլ նրանց միջոցով, ի-

բան թեթև զգալով, վերցնում է քնարը ու սրտի
ախը, ոխը, կասկածը, ցաւը թէ ուրախութիւնը
հասկացնում է իւր չորս կողմում—լռած մարդ-
կութեան...

Ինչպէս...

... Ընկնելով փոշոտ ժայռեր, խօսելով զա-
նազան թռչունների հետ, կանգնելով վիթխար
գազանի դիմաց, փնջելով անուշահոտ ծաղիկ-
ներ, լողալով ծովի փոթորկալից-ալիքներում,
բողոքելով երկնքի, աստղների, լուսնի, արեւի և
երկրի մարդկութեան հետ...

Սիրելի ընթերցող! դուք էլ այո! Ես էլ նոյն-
պէս, ես էլ ձեզ պէս...

... Իմ լաւ օրերս, թշուառ կեանքս անց
եմ կացնում ուրախ ու զուարթ, տխուր ու տըր-
տում երգերի միջոցով...

Եւ մարդիկ, շատ ժամանակ, խաղաղ կեր-
պով, երգով են յաղթում բոլորին...




ԳԱՐՈՒՆ

Բարով եկար, սիրուն զարուն,
Ամեն մի տեղ հոտ փռչիւր,
Ազատ ես դու և շողշողուն,
Սրտիս իղձը — կատարիւր...

Այժմ թոյլ տուր բուրաստանում
Ազատ մանգամ... և երգերով
Քեզ հետ բերած ծաղկունքներում
Ծաղիկ փնջեմ վառ սրտով...

10 մարտի 1910

Թիֆլիս



Ա՜ն ԼԱԻ ԷՐ ՈՐ ԵՐԱՁ ԷՐ...

Ահա մի տեղ, սիրուն աշխարհ,
չքնաղ ծաղիկ բխրահոտ
Եւ իմ աչքին բացուեցաւ,
ձերմակ—տնակ հայրենի...

Այդ տան միջից, սիրունիկս
 երգեր երգեց—արիւնոտ...
 —«Գնա՛ ինձնից, ես մարդ ունեմ,
 գէշ, աւազակ—վայրենի...»

Ահա մի տուն, մեծ-մեծ ծառեր,
 կանառնչ խոտեր ծաղկաւետ
 Եւ իմ աչքում երեւցաւ
 սիրուն հագուած մի պարոն...
 Նախշուն բալէս նորա գրկում,
 չորացել էր ինչպէս փետ...
 —«Բալէս-բալէս, ի՞նչ արեցիր
 դու անըզգամ սե մարոն...»

Ահա մի տուն, ահա մի ծեր
 եւ մի պառաւ մէջքան ծոռ.
 Ահա կինս, ահա և նա—
 ազիզ բալէս—թանգագին...
 Ահա մի թումբ, գերեզմանոց,
 միջին բալէս տըկըլոր,
 Աչք ու բերան դայիմ կողպած,
 «հայրիկ» բառը շրթունքին...

Ահա մի տուն և մի նամակ
 «կարմիր բառեր» ճըժմըժած...
 Ահա և նա սիրուն «պարոն»...
 տես կարդում է, ի՞նչ, ի՞նչեր...

Խեղճ դու, խեղճ կին, ի՞նչ ես լալիս...
 ես սաղ եմ սաղ... չէմ մեռել,
 Ախ իմ քօռ բախտ... ախ սիրելիս...
 ախ լաւ էր որ երազ էր...

29 յունիսի 1913




* * *

Նախշուն նկար, փայլուն գիշեր,
 կապոյտ երկինք, վառ աստղեր,
 Խոր-խոր մտքեր...
 Երկնքին են—պատկանում...

Միշտ մութ, խաւար, ժայռոտ սե լեռ,
 Քարափ, անդունդ, անթիւ դարդեր,
 Վա՛յ դուք—ցաւեր...
 Սրտիս մէջ են պլտտում...

13 օգոստոսի 1913




* * *

Ես լալիս եմ տըխուր—տըտում
 Կեանքս հալում, շինում կէս...
 Իսկ նա ուրախ—լրբանոցում,
 Քրքջում է ձիու պէս...

Նա սիրտ չունէ իր սև սրտում,
Քարացել է, թնչ անեմ...
Թէ ինձ, թէ քեզ, մէկ է սիրում...
էլ ես նրան, սիրող չեմ...

23 յուլիսի 1913



ՄԱՅՐՍ ՄԵՌԱՒ ՈՒ ԳՆԱՅ

Երբ որ ծագեց պայծառ արև
Փայլեց իմ մօր ճակատին.
Աչքը բացաւ, նայեց վերև
Եւ ինձ սեղմեց չոր սրտին...

Երբ որ երկինք բարև տուաւ
Եւ ընդունեց ինչպէս հիւր...
Մի ինչ որ «բան» սիրտս ընկաւ
էլ չի տալու ինձ համբոյր...

Երբ որ ասաց.—«Վերջին անգամ
«Արի այստեղ համբուրձմ...
«Իսկ երկրորդը, ջերմը կը տամ
«Երբ երկնքում—կը տեսնեմ...»

Երբ որ ասաց.—«Մնաս բարև
Բարի դաւակ—սիրելիս
Ես գընում եմ... այնտեղ... վերև...»
Եւ ինձ թողեց, նայելիս...

Երբ որ կողպեց իւր աչերը
Եւ ձեռները խաչ գրին,
Ու կարգացին Սուրբ էջերը.
Եւ ինձ մօտից—հեռացրին...

Երբ որ խմբով, լաց ու կոծով
Նաչը տաւան—ուսերին...
Առօր-փառօր, Սուրբ երգերով
Ընծայեցին սև հողին...

Երբ հետ դարձան գերեզմանից
Թևից բռնած, հայրիկիս
Աղի արցունք մեծ աչքերից
Նա թափում էր իմ գլխիս...

Երբ հայրիկս ինձ պինդ սեղմեց
Ու լաց եղաւ—երեսիս.
Եւ նորանց մէջ, մեծ ամենից,
Ես չըտեսայ—մայրիկիս...

Միայն, այն ժամ ես հասկացայ
Սև թոքերս մրմնջաց...
... Այն օրանից—եթիմացա...
... Մայրս, մեռաւ... ու գընաց...

10 յուլիսի 1912



* * *

(Նուէր Լեոն Կարապետեանցին)

Գիշեր-ցերեկ ճրագ վառած
Քո այդ մութը—կանտօրում
Լալն սեղանի առջև նստած
Հաշիւներ ես արտագրում...

Ցուրտը անցաւ, շուտ սլացաւ...
Եկաւ գարուն—սիրահար...
Նորանք... և նա... ուրախացաւ
Ուրբեր լի են—բաւարար...

Զատիկ... մեծ Տօն... լաւ արեւ օր
Կուշտ մարդիկ են ծիծաղում,
Միայն ընկեր դու ես մոլոր,
Որ փող չունես—գրպանում:

Ընտանիքդ քեզ որ տեսնէ,
Հոգս չունենալ իւր կեանքում,
Կըտայ համբոյր և այս կասէ.
—«Մենք հիւրեր ենք աշխարհում...»

Բայց որ բալէդ, դատարկ տեսնէ
Որ դեռ «Կարմիր» չես առել,
Անմեղ արցունք շատ կը թափէ
Որ մէկէլ ես դու խաբել:

Այս չը քաշես իմ ընկեր ջան
Մինչև անգամ չը հոգաս,
Հարուստները թող մրմնջան
Բոլորիս է մի «սև նաշ...»

10 ապրիլի 1911



Ա Ն Է Մ Գ

...«Շատ ես տուժել կըռիւններում
«Արիւն արցունք թափելով,
«Կայծ ես դրել չարի սըտում
«Թշուառ ազգդ յիշելով:»

«Դու ընկել ես մի ճանապարհ
«Սիրոյ, յոյսի, հաւատի,
«Ճշմարտութիւն, սէր, հաւասար,
«Աչքը փուլ գայ ծուռ դատի...»

«Ա՛խ իմ որդի, աղիւղ բալա
«Շատ ես քընել—դէ գարթիւր,
«Բնց աչերդ և սիրտ արն
«Քեամբաղդ մօրդ փաթաթելիւր:

...«Թո՛ղ որ էրէի նորա լեռդը
«Անյայտ մնայ աշխարհում
«Թո՛ղ որ ճաքւի նորա սիրտը
«Ով որ մահ է քեզ ուզում...»

12 մայիսի 1913

Կ Ա Պ Ի Կ

Մեր տան բակում, թուրքի ուսին
Մի կապիկ էր գիք նստած,
Սև եաղուխը կապած փասին,
Աչքը, ունքը—զարգարած:
Նա նայում էր իւր չորս կողմը
Եւ աչքերը—ճըպճըպում,
Թոյլացնում էր պըկի քօղը,
Թուրքի գլուխը քըթըռում:
Լայնացնում էր ունգները
Մեծ գըլուխը տրորում
Կնճրտում էր ատամները
Համ մոճըռում համ կանչում.

«Ըճւր, ըճւր,
«Շաքար տո՛ւր:»

Ուրախ—զւարթ մանուկները
Ծիծաղում են ու նայում,
Կատաղում էր սև մայմունը
Նորանց վրայ—յարձակում:
—«Եավաշ, մայմուն, աղջիկ պարո՞ն»,
Թուրքի գեաղան էր գոռում
«Մի կատաղիր... լմա, մեծ բարո՞ն,
«Արի պառկիր իմ ծոցում...!»
Լայնացնում էր ըռունգները
Մեծ գըլուխը տրորում
Կնճրտում էր ատամները
Համ մոճըռում. համ կանչում.
«Ըճւր, ըճւր,
«Շաքար տո՛ւր:»

14 ապրիլի 1913

Կ Ռ Ի Ի

«Ա՛խ, իմ բալա, սիրուն բալա
«Դարդս շատ է վեր կոխել,
«Լինես աղջիկ, թէկուզ տղայ
«Քեզ չեմ ուզում լոյս թողնել:»

«Ես ուզում եմ հեռու գընալ,
«Հեռու-հեռու մարդկանցից,
«Ես չեմ ուզում երկար մնալ,
«Որ դու գառնաս—նորանցից:»

«Ա՛յնտեղ լաւ է, լուսին, աստղեր
 «Մեղնից ներքեւ են փայլում,
 «Ես կը պոկեմ քո վառ աչեր
 «Եւ կը դընեմ իմ ծոցում»

«Ա՛խ, իմ բալա, անտես ըալա
 «Դարդս շատ է վեր կոխել.
 «Լինես աղջիկ թէկուզ տղայ
 «Քեզ չեմ ուզում լոյս թողնել»

10 փետրուարի 1913



* * *

Մի սիրուն հաւ շատ ձու ածեց
 Պատից կախած քըթոցում,
 Զալ ու պստիկ ձտեր հանեց
 Իր տանտիրոջ պոճախում:
 Կըռթկըռթում էր, չէր հեռանում
 Մերկ անփետուր ձտերից,
 Միշտ թշնամուն շուտ էր հասնում
 Ու ազատում ճանկերից:

Նա չէր թողնում ոչ ոք նայի,
 Մօտիկ թռչէն—կրկնքով,
 Նա չէր թողնում, և կենդանի,
 Որ անց կենայ իր մօտով..

Երբ պառաւը, չալ ձտերի
 Եւ հաւի մէջ սէր տեսաւ.
 Ուրախացաւ... և խեղճերին,
 Միշտ կուշտ պահիլ սկըսաւ...

Երբ մեծացան, փետուր առան
 Եւ նեղացան խեղճ մօրից,
 Քեամբախտ մօրը գոմը տարան՝
 Բաժանեցին—իրարից...

Մայրը փախաւ, կրկին հասան
 Թեւը-թևից կապեցին
 Զրում գըրին, գոմը տարան
 Քիչ էլ դունչը—դադեցին...

Մարդիկ եկան և ձտերին
 Կէսը գորով ձեռք առան,
 Տարան տւին—հաստափորին
 Որ նա կոխի իր բերան...

Բաւական է ով չար հարուստ
 Որքան թոյլ տանք—կըխայթես,
 Թէ հաւ, թէ մարդ... խօսանք դրուստ
 Է՞լ ով մընաց, որ չուտես...

13 օգոստոսի 1913

Թիֆլիս



ԱՍՍ. ԵՂԲԱՅՐ

Ասան եղբայր, քեզ ի՞նչ երգեմ
 Լարը թոյլ է իմ սրտի,
 Գիշեր-ցերեկ մըմնջում եմ
 Կեանքը մոռալ է աշխարհի...

Ասան եղբայր, ես ի՞նչ երգեմ
 Այրուած-խոցուած իմ սրտից,
 Ճիշտն ասան, ես ի՞նչ վնջեմ
 Արևախաշ—խոտերից...

Նայիր եղբայր, լուսին, արև
 Ո՛հ ինչպէս են ընթանում...
 Իսկ խեղճ մարդը—մարդկանց միջև
 Ճանճի պէս է տըզվըզում...

Ասան եղբայր, էլ ի՞նչ երգեմ
 Որ չեմ տեսած մի լաւ օր,
 Թոյլ լարերով... ես արձան եմ,
 Եւ ես անձայն—ձայնաւոր...

15 մարտի 1911

Թիֆլիս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
 ԽՈՐՀԱՆՈՒՄԻ ԵՐԵՎԱՆԻ
 7/11-1922

17263

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Գումարով գնողներին 20% զեղչ:

Գրքերի պահեստը գտնվում է—Тифлисъ,
Красногорская ул. № 12.

1013

